

այսինքն Իվերացիների-Մնդրելցիների մօտ իբր-ը-զ-խ-ու-ա  
(ռուս հրատ. եր. 137, 9, սոյն թարգ. եր. 70, 29) մնդրե-  
լական ազգանուան (Փամիլիա) ձև է ներկայացնում, բար-  
գուած մնդրելական զ-խ-ու-ա բառով, այսինքն սքուա  
(sqwa) որ մնդրելերէն նշանակում է որդի<sup>4)</sup>: Եւ, որ կա-  
րենըն է, այս առաջին հովուապետի մերձաւոր առնչութիւնը  
Սեբաստիայի քառասուն մանկանց, նրա ներկայութիւնը նրանց  
նշխարների գիւտի ժամանակ (ռուս հրատ. եր. 137, 13 սոյն  
թարգ. եր. 70, 27) հնարաւորութիւն է տալիս բացատրելու  
Մնդրելիայի գլխաւոր սըրութեան—այն է Մարտվիլի-ի վանքի  
անունը: Ամենքը լաւ հասկանում էին, որ «Մարտվիլ-ի» յու-  
նարէն բարոր-մարտիրոս, նահատակ-բառի վրացերէն կանո-  
նաւոր փոխագրութիւնն է, իսկ Մարտվիլի տաճարը Ս. Աս-  
տուածածնի վերափոխման է նուիրուած: և վանքի անունը  
իսկապէս անհասկանալի էր երեսում: Նատ հաւանական է, որ  
վրացիների, յատկապէս իվերացի-մնդրելների առաջին միտրօ-  
պօլիտը, որ այնքան մօտ առնչութիւն ունէր Սեբաստիայի նա-  
հատակների նշխարների գիւտի գործին, իւր առաջին եկեղեցին  
կառոյց ի պատիւ Սեբաստիայի նահատակների: Դիւբուան ասում  
է, որ Մարտուիլի եկեղեցին կառուցուած է հեթանոսական բա-  
զինի տեղում (Ճ. Բակրած, Կавказъ въ древнихъ памятникахъ  
христианства. եր. 96): Ի հարկէ, այդ գեռ մեծ փաստ չէ, որ Մար-  
տվիլում անպատճառ տեսնենը Սեբաստիայի ու նահատակների  
տաճար: Ի դեպ, մեր նպատակի համար բաւական է մտաքերել  
Իվերիա Մնդրելլիայի մի ուրեշ եկեղեցի Մարտվիլին հարեան, նա-  
քալագել աւանում, որը ճշդելու համար հետախոյզները մերձե-  
նում են կասիքական տեղեկութիւնների հայեցակէտով, տեղե-  
կութիւնների, որոնք դեռ նախապէս քննուած չեն տեղական աշ-

4) Ամենայն հաւանականութեամբ իրիր-բ-ի արմատն էլ տեղական  
ծաղումն ունի, Ցոյց տամ նրա մի հնարաւոր բացատրութիւնը: Արա-  
բական բնագրում արմատի ծեւն է իսկապէս բ-ի-ր-բ (в-у-г-в) որը  
կարելի է առանց որեւ է դժուարութեան կարդալ ի-ր-իի-ր-եր (i-в-у-i-r-eв)  
այսինքն իվեր յօդնականացուցիչ եր. փոխ. եպ տեղական վերջաւո-  
րութեան. որովհետեւ արաբերէնում պ հնչիւնի իսկական նշան չը կայ:  
Այդ վերջաւորութիւնը լազերէնում այժմ եպէ հնչւում, մնդրէրէն  
—իվերերէն՝ էֆ. եւ վրացերէն-բարթվելերէն՝ եբ: Այսպիսի բացատրու-  
թեամբ Իրիր-բ-զիսուա, փոխ. Իրերեր-պիսուա կը նշանակէր «Իվերացոց  
որդի», այսինքն իվերացի, եւ, իրաւի, արաբական վերսիայում էլ  
տեղեկութիւն է տրում, որ այդ միտրոպօլիտը վրացի փոխ. իվերացի էր,

Խարհագըութեան, ազգագրութեան, լեզուական և քրիստոնէական կուլտուրայի չափազանց բարդ հարցերում:

Մուրավէելի առելով (յիշ. յօդ. II. եր. 268—269), նաքալարելում կարելի է տեսնել միակ եկեղեցին, որ չէն է մնացել աւելրապների մէջ: Նա կառուցուած է մասամբ անտաշ քարով, մասամբ աղիւսով, և իւր բիւզանդական ձեւրով խորին հնութիւն է երեսում: Կարելի է համաձայնել ուսումնական ճանապարհորդների կարծիքին, որոնք այդ եկեղեցին վերագրում են Յուստինիանոսի ժամանակին, որովհետեւ Պրօկոպիոսի պատմութեամբ յայտնի է, որ նա լազերի մօտ եկեղեցի շինեց, երբ նրանց թագաւորը քրիստոնեայ դարձաւ<sup>4)</sup>: ուրեմն, այս եկեղեցին դուցէ վեցերորդ դարից է և հաւանօքէն նույի ըուած էր Աստուածամօր անուանը, ինչպէս է Յուստինիանոսի շինած եկեղեցիների մէջ մտօր: Բայց այստեղ նա կը ում է քառասուն նահատակների անունը, որովհետեւ աջ կողմում ցոյց են տալիս քառասուն շրջանակներ, յատակի՝ վերայ ուղիղ դասաւորուած, ուր, որ պէս թէ թաղուած են Սերաստիայի նահատակների սըրագան նշանարները: Տեղական աւանդութիւնը մինչեւ անգամ քառասուն նահատակների լին է անուանում Տեխուրա դետի այն գեղա տեսիլ մասը, որով մենք հիանում էինք, և հաստատում է, իւր թէ, նրանք այնտեղ են չարչարուել: Սակայն պէտք է որ մի հիմք ունենայ այդպիսի աւանդութիւնը: Մուրավիելի վերջին ենթադրութիւնը բոլորովին ուղիղ է: Այս աւանդութիւնը ամենայն հաւանականութեամբ կապ ունի Խվերիաշյում քրիստոնէութեան սկզբնաւորութեան այն պատմութեան հետ, որը պահպանել է մեր համար Ս. Գրիգորի մասին զրոյցի արաբական վերսիան, (ռուս հրատ. 137. 9. սոյն թարգ. 70. 27): Գրա հետ կապ ունի (ռուս հրատ. եր. 147. 15, սոյն թարգ. եր. 80. 27). և այն՝ որ քառասուն նահատակների եկեղեցու որմերի նկարների մէջ, «մոռացուած չեն կոստանտինու ու Հեղինէն, որոնք պատահում են Մնդրելիայի և Իմերեթիայի բոլոր եկեղեցիներում» (Մուրավիել, յիշ. յօդ. եր. 270): Այսպիսի հանդամանքում հասկանալի է, որ Մարտիր կոչումն էլ բացատրուում է նրա առաջն եկեղեցու կառուցմամբ ի պատիւ նոյնպէս քառասուն նահատակների կամ, գուցէ, Ս. Յովհաննու կարապետի, որի մատը գտնւում է այդ

4) Մուրավիելը այստեղ արխաղներին լազերի հետ է շփոթում,

վանքի աւանդատանը (յիշ. յօդ. եր. 253): Յովհաննու Կաբապետի և Քառասուն Նահատակների պաշտամունքը, որ ներմուծել է Խվերա Ս. Գրիգորից ձեռնադրուած առաջին միտրոպոլիտը, հետեւողութիւնը կը լինէր հայերի հին յարդանքի առ Յովհաննէս Կարապետ, առ Աթանագինէ նոյնպէս և առ Քառասուն Նահատակները, որոնց Նշանակարները Հայաստան քերեց ինքն Ս. Գրիգորը: Հետաքրքիր հնագոյն յիշատակարանը Մարտիւլում է «գուցէ Ը. Դարից էմալի մի նմուշ», որ փոքրիկ պատկերի մի կտոր է Յիսուսի Նկարով: Յովհաննէս Կաբապետը երկրպագութիւն է անում պատուանդանի վերայ կանգնած Փրկչին, երկու ձեռքը մեկնելով Նրան (Ա. Կոնդակով, յիշ. յօդ. 74): Ի հարկէ, ոչ մեր արաբական վերսիան և ոչ էլ Նրա յունացին քնագիրը չեն կարող վերաբերուել իսկական Խվերացիների քնակութիւն հաստատելու ժամանակին. բայց անկառած, այդ արաբական վերսիայի մէջ ընկել են իրականութեան ընձագանքներ, որ յառաջ են եկել մի որ և է աւելի հին, Խվերացիա-Մսգրելիայի մասին տեղական աշխարհագրական մանրամասնութեան և տեղեկան եկեղեցական ուղղութեան շրջանում՝ լաւ տեղեակ ազբեւրից: Արաբական թարգմանութեամբ ներկայ խմբագրութեան հեղինակն էլ, ամենայն հաւանականութեամբ, ինկատի ունի բոլոր վրացիներին:

Յիշատակարանի թուականը ճշդելու համար ես աւելի կը յենուէի այն բանի վերայ, որ վարքագրութիւն կազմողը Դուինի վերայ նայում է որպէս մի հասարակ եպիսկոպոսական աթոռի վերայ (ռուս. հրատ. եր. 139, 15. սոյն թարգ. եր. 72, 30), բայց Դուինի մասին հարեւանցի ասուածի մէջ էլ կայ թէութեան և անաքրօնիզմի (սխալ ժամանակագրութեան) մասն: Յիշատակարանի ժամանակը լաւ ճշդող կարող է լինել և այն ցուցմունքը, թէ հայոց եկեղեցում Երբ է սկսել յիշատակուել Կոստանտնի և Նրա մօր անունը: Հեղինակը այս բանը այնպէս է յայտնում, որպէս թէ կամենում է արդարացնել մի որ և է նորամուծութիւն (ռուս հրատ. 147, 15.-16. սոյն թարգ. 80, 27-30): Սակայն արաբական վերսիայում իսկոյն աչքի է ընկնում արտաքին, անկախ մի ցուցմունք, որ վճռապէս խօսում է յօդուտ այն բանի, թէ Նրա յունացին քնագիրը խմբագրութիւնը է. — լ. դարերից հին չէ: Այսպէս են վկայում աշխարհագրական մի կարգ անունների վրացական ձևերը:

Սոյն խմբագրութիւնը Ագաթանգեղոսից տարբերւում է ոչ միայն առանձին մանրամասնութիւններով, այլ մասամբ և յօրինուածքով, օրինակ, քարողը (եր. 101-107. սոյն թարգ. եր. 35—42) որ արաբական վերսիայում դրուած է Ս. Գրի-

գործ աեսիլքից և նրա մեկնութեւնից յետոյ (ռուս հրատ. Եր. 99—101, սոյն թարգ. Եր. 33—35), Ագաթանգեղոսը զետեղելէ տեսիլքից առաջ: Եւ այս առաջ է եկել նրանից, որ Ագաթանգեղոսը մինչև տեսիլքը ներմուծել է վարդապետութեան մի ամբողջ գիրք (Եր. 153—417): Միւս կողմից արաբական ընտագրի մէջ էլ տեսիլքից առաջ կայ Ս. Գրիգորի մի փոքր վարդապետութիւնը (ռուս հրատ. Եր. 97—99, սոյն թարգ. 31—34): բայց ոչ ճիշդ համանման Ագաթանգեղոսի խմբագրութեան մէջ եղածին (տես վերև ռուս հրատ. 162 Եր. սոյն թարգ. Եր. 101—102): Սակայն երկու խմբագրութիւններն ամբողջովին համեմատելու կարիք չը կայ: ցանկացողը ինքը կարող է այդ անել: Համեմատում եմ միայն մի քանի տեղերը, որոնք ընորոշում են այստեղ յարուցուած հարցերը:

1. Արաբական վերսիան հոգածութեամբ կրկնում է (ռուս հրատ. Եր. 119, 25—26, սոյն թարգ. Եր. 53, 32) տեղեկութիւններն այն մասին, թէ Ս. Գրիգորի նահատակութեան գործերի սկիզբը, բանտարկութեամբ և զանազան տանջանքներով, գրուել է Արդէն (Երէզ) մեծ քաղաքում: Հայ ազգային խմբագրութիւնը համապատշաճ տեղում բաց է թողնում այս հետաքրքիր, իրան էլ լաւ յայտնի (Եր. 39—48) մանրամասնութիւնը, որ անկատակած, տեղական նահատակ Ս. Գրիգորի գործերի սկզբնական նկարագրութեան խեշերանքն է:

2. Արևմտեան Հայաստանի, Լազիքին և Իվերիային սահմանակից, ծայրագաւառի նահատակը դարձել է լուսաւորիչ սահմանակից ժողովուրդների-Հայերի, վրացիների, լազերի (արևագների) և աղուանցիների (ալանների): Յոյնի կամ յունասէրի գրչի տակ յունական քարոզչի մասին զրոյցի այս ընական խոշորացումն լիովին պահպանուած է արաբական վերսիայի մէջ, մինչդեռ հայ ազգային խմբագրութեան մէջ մեր ուշագրութեան առաջարկուում է միայն իրանց—հայերի—մկրտութիւնը: Սակայն Հայաստանին հարեւան ժողովուրդների մկրտութիւնը Ս. Գրիգորի ձեռքով, յամենայն գէպս, յոյն խմբագրութեան առանձնացնող նորամուծութիւնը չէ, որ պահպանուել է արաբական վերսիայի մէջ: Այդ գիծը հաւանօրէն յատուկ է եղել և այն ժամանակ, երբ տեղական քարոզչի գործերը փոխակերպւում էին ընդհանուր առաքելական գործունեութեան պատմութիւն, եթէ կամենում ենք ենթադրել, որ Ագաթանգեղոսը, բաց և մեր արաբական վերսիայի ընագրից ուրիշ աղբեկը էլ է ունեցել: Նոյն գծի հետաքրքիր յիշատակութիւնը գտնում ենք հայ ազգային խմբագրութեան մէջ էլ: Հայ խմբա-

գրութեան հեղինակը յատկապէս թւում է քոլոր յիշուած ժուզովուրդների սահմանները և դեռ էլ աւել՝ որպէս Ս. Գրիգորի քարոզչական գործունէութեան շրջան, բայց այնպիսի ձեռվ, որպէս թէ խօսքը միայն Հայաստանի մասին լինէր<sup>1)</sup>: Այս հեղինակը, որ յայտնի է Ագաթանգեղոս անունով, ներկայ ընագրում խուսափում է ժողովուրդների անունները տալուց. Նա չի յիշում, օրինակ, վրացիներին, ուսուինեաւ, պէտք է կարծել, որ նրա ժամանակ արդէն վրացիները հակաքաղկեդոնական հայերի հետ ոչ միայն մի չէին, այլ եկեղեցու դաւանութեամբ էլ անջատուած էին: Կար մի ժամանակ, երբ վրացիների քրիստոնեայ գառնալը Ագաթանգեղոսի մէջ էլ կապւում էր Ս. Գրիգորի գործունէութեան հետ, բայց վրաց լուսաւորիչ Ս. Նունէի մասին զրոյցի միջոցով: Այս մասին մանրամասն տեղեկութիւն է տալիս Մ. Խորենացին (Բ. 86), յենուելով յանուանէ՝ Ագաթանգեղոսի պատմութեան վերայ, յատկապէս այնտեղի վերայ, որ քիչ վերև մէջ է քերուած: ուր, հաւանօրէն, յետին ժամանակներում նունէի մասին դէպքը յատկառուելով, ստացուել է պատմական աշխարհագրութեան կատարեալ լաղաթիւրումն, ի մասնաւորի, Վրաստանի սահմանների մասները դառնալով Հայաստանի սահման: Ըստ Մովսէս Խորենացու՝ Ագաթանգեղոսը Վրաստանի այս սահմանները վերագրում է Ս. Նունէի քարոզչական գործունէութեան շրջանին: Քացասական քննադատութիւնը այս դէպքումն էլ մեղադրում է Մովսէս Խորենացուն, որ նա անբարեխիղճ գիմումն է անում: բայց Մովսէս Խորենացին, այն ժամանակ էլ ինձ թւումէ, ճշմարիտ էր, և նրա ճշմարտութիւնը այժմ աւելի ևս տեսանելի է, երբ հաստատում է, ինչպէս ցոյց է արուած (ռուս հրատ. 63—64. սոյն թարգ. 83—84) նրա միւս նոյնպէս անբարեխիղճ համարուած դիմումն Ագաթանգեղոսին:

4. 485—486. «Եւ այսպէս (Ս. Գրիգոր) ընդամենայն երկիրն Հայոց՝ ի ծագաց մինչեւ ի ծագս ծգէր տարածանէր զմշակութիւն բարողութեանն աւետարանութեան: ի Սատաղացւոց բաղարէն մինչեւ առ աշխարհաւն Խաղողիաց: մինչեւ առ Կղարջօք, մինչեւ իսպառ ի սահմանս Մասրթաց (յոյն. տարբ. ընթերց. + Եւ Հօնաց») մինչեւ ի դրունս Ալանաց, մինչեւ ի սահմանս Կասփից (յոյն ընթերց. ցղրունս) ի Փայտակարան քաղաք արքալութեանն (ընդգծումն ուռւս, հրատ.) Հայոց, եւ յԱմդացւոց բաղարէն մինչեւ առ Մծրին բաղաքաւ. քերէր առ սահմանօրն Ասորւց, առ Խոր-Երական երկրաւն եւ առ Կորդոր մինչեւ յամուր երկիրն Մարաց, մինչեւ առ տամբն Մահրբատան իշխանին, (յոյն. տարբ. ընթերց. Մախուրտաց) մինչեւ յԱտրպատական ծգէր տարածանէր զաւետարանութիւն իւր»:

Սակայն Ա. Նունէի գէպքն, որ Վ.թաստանի դարձը կապօւմ է Հայաստանի հետ, է սկզբնական անկախ զքոյցների յետնագոյն յերիւրանք, գուցէ և երկու եկեղեցիների որ և է ժամանակաւութեան արտայայտութիւն, եկեղեցիների, որոնք անջառուած էին արդէն, կամ վերջապէս մտել էին իւրաքանչեւրը իւր անկախ զարգացման ճանապարհի մէջ:

Յ. Ա.թաքական վերսիայում (ռուս հրատ. եր. 147—148, սոյն թարգ. 81, 82), նոյնպէս և հայերէնից յոյն թարգմանութեան մէջ (եր. 85) նիկիայի ժողովի կանոնները, որ բերել էր Ա.թիստակէսը, Ա. Գրիգորը ընդունում է ուղղակի ի կիրառութիւն: Ա.թաքաց Գէորգ եպիսկոպոսի ասածին համեմատ, Գրիգորը, որ իւր բարեհայեցողութեամբ առաջուց կանոններ ու կարգեր էր սահմանել, անձամբ է շտապում նիկիայում գումարուելիք ժողովին (de Lagarde, An. Syr. եր. 123, 23—26), անկառակած, ժողովի վճիռները կիրառութեան ընդունելու համար<sup>1)</sup>: Ագաթանգեղոսի ընագործի հայկական խմբագրութեամբ Լուսաւորեցը նոյն «լուսափայլ» կանոններին յաւելումն է արել («ի նոյն լուսաւորական կանոննն յաւելեալ» Ագաթ. եր: 507, 22): Այստեղ ակներև է ջանքը, հաստատելու հայ ազգային եկեղեցու հին և նոր առանձնայատկութիւնների հնաւասնդ լինելը, առանձնայատկութիւնների, որոնք օտար են յոյն եկեղեցուն, և որոնց ներմուծող ակամայ հանգիսանում է Ա. Գրիգորը<sup>2)</sup>:

Գ. Կայսերութեան հարևան երկրների յունական քարոզչե

1) Դրա համար էլ Գէորգ եպիսկոպոսը վրդովեում է հայոց եկեղեցու առանձնայատկութեամբ, որը հաղորդութեան մէջ Թոյլ է տալիս միայն անխառն զինի: Նա այսպէս վարուելու ապացոյցները վատարանելով է մէջ բերում, (յիշ. յօդ. եր. 128, 5). բայց գործադրութիւնը ոչ յանցաւոր. Թէեւ չի ընդունում, որ Հայաստան ներմուծած լինի անպատճառ Ա. Գրիգորը, միայն հնթաղրում է դրա հնարաւորութիւնը. (յիշ. յօդ. 126, 23)

2) Ագաթանգեղոսի աւելադրութիւնը պատահական տարբեր ընթերցմունք չէ, յառաջացած առանց որ եւ է զիտման, կամ արտագրողի գոչիգ. ընդհակառակն. հայ ազգային եկեղեցու շահերի պաշտպանութեան համար խմբագրական դիտաւորեալ սրբագրութիւն է, այնպէս, ինչպէս այդ շահը հասկացւում էր Է. Թ. դարում: Դրա համար էլ, այն միտքը, թէ Ա. Գրիգորը Նիկիական կանոններին յաւելումներ է արել, կրկնում է հայ ժողովների կանոնների հեղինակը. կանոնների հաւաքածուն կազմուած է, յամենայն դէպս՝ մշակուած է ազգային եկեղեցական, հակաքաղկեդոնական հոգով, եւ վերագրւում է Յովհան Թմաստասէրին (Գիրք Թղթոց, եր. 220).

դորժունէութեան մասին զբոյցը ամբողջ Հայաստանի քրիստոնէական գարձի ազգային պատմութիւն դարձնելով և միանդամայն Ա. Գրիգորի միստիայի շրջանը էլ աւելի ընդարձակելով գէպ ի հարաւ, Ագաթանգեղոսը ի հարկ է, չէր կարող հաշուի չառնել, թէև թոյլ կերպով, հայոց եկեղեցական գործի իսկական գրութիւնը: Նա չէր էլ կարող բոլորովին չտեսնելու տալ սիրեական ազգեցութիւնը: Եւ անհաշտելին հաշտեցնելու ձգտման հետեւանքն այն եղաւ, որ կեսարիական յոյն եկեղեցու սան և արքանեակ Ա. Գրիգորի գեկալվարութեամբ, Հռովմում կրթութիւն ստացած Հայոց Տրդատ թագաւորը ժողովում է հայ մանուկներին ուսուցանելու մի մասին ասորեքէն, մի մասին էլ յունարէն (484 եր.): Ա. Գրիգորի մասին արարական վերսիայի մէջ սիրեական լեզուի ընաւին չը յիշուիլ աւելի հին երևոյթ է<sup>1</sup>):

5. Կարծում է, որ սիրեական ազգեցութեամբ հայ գրականութեան մէջ մտած նիւթերի այսպիսի անհրաժեշտութիւնը կարող էր Ագաթանգեղոսին թելադսել սիրեական Բարչամինա անունով աստուած զետեղել Թորդանում (Ագաթ. եր. 455—456), ուր, արարական վերսիայի համեմատ (ռուս հրատ. եր. 119, 10—11. սոյն թարգ. 53, 8) Զեսի տաճարն էր: Յօդու այս բանի խօսում է մի հանգամանք էլ, այն է, որ արարական վերսիայի մէջ սոյն տեղում մենք ունենք, Թորդանի մասին աւելի գիտակ անձի հաղորդած տեղեկութիւնը: Նա այս քաղաքի անունը տալիս է աւելի լիւ և պէտք է կարծել, աւելի հին ձեռով այն է Միթրոդան:

6. Հայ ազգայնական խմբագրութեան ընագրին է պատկանում հեթանոս աստուածների անունների ազգայնացնելը, այսինքն յունական անունները հայկականի փոխելը. սակայն այս համեմատաբար յետնագոյն ժամանակի երևոյթ է, որովհետեւ թէ ազգային խմբագրութիւնից կատարուած յոյն թարգամանութիւնը և թէ Ա. Խորենացու պատմութեան մէջ յունական անունները միայն գիտեն: Ա. Գրիգորի պատմութեան մէջ յունական անունների նախապատռութիւնը կապ ունի և այն բանի հետ, որ նոյն իսկ նրա ազգային խմբագրութեան, այսինքն, Ագաթանգեղոսի մէջ էլ

1) Արարական վերսիայում խօսուում է Ալիսս Եպիսկոպոսի մասին (ռուս հրատ. եր. 459. 5-4. սոյն թարգ. 72. 40-46), որ նա կրթուած էր զանազան վիտութիւնների մէջ հուոմների եւ «հեթանոսական» լեզուներով. այսինքն հաւանօրէն հին յունարէն Յամենայն դէպս ասորերէնի մասին այստեղ խօսք չի կարող լինել.

անունները ընդհանրապէս կրում են յունական վերջաւորութիւն, օրինակ նոյն ինքն Գրիգորի անունը, մինչեւ անդամ բռն հայկական անունները, որպիսի են Տրդատ, Վրդան՝ յունական ոս, իսո, էս, էն-վերջաւորութիւնն ունեն-Գրիգորիս, Տրդատէս, Վրժանէս; Եւ այս չպէտք է վերագրել այն բանին, որ Ադաթանգեղոսը յունարէն ընագրի կամ յունարէն ո՞ր և է աղքիւրի ազգեցութեան տակ է եղել: Այս կախումն ունի այն բանից, որ առաջին խմբագրութիւնը կազմուել է հայերէն այնպիսի յունասէր գրողից, որ ապրելիս է եղել այնպիսի հայ շրջանակում, ուր, անկախ գրական դաստիարակութիւնից, տարածուածէր հայ անունների յունացումն, ճիշդ այնպէս, ինչպէս մի ժամանակ Ռուսաստանի հայերի մէջ ընդունուած էր իրանց բռն ազգանունների ենց կամ եանց, եան վերջաւորութիւնը՝ ուռսական ովլ փոխելը<sup>1)</sup>:

7. Կարեք չկայ առել, որ միայն հայ ազգային խմբագրութիւնն է զարդարուած ժողովրդական երգերով ու զրոյցներով. արաբական ընագրի խմբագրութեան մէջ չեն մտել Տրդատի մասին (Ադաթ. եր. 88,) ժողովրդական զրոյցների հատուածները, ժողովրդական արտայայտութիւնները հարսանեկան հանդէսների մասին «հարսանեաց զպարսն պարել և զկաքաւսն յորդորել» (Ադաթ. եր. 112), Տրդատի Արտրտո գնալու նկարագրութեան մէջ առասպելական գարձուածի հատուածը (Ադաթ. եր. 446), թէև նոյն ինքն Տրդատի անձնաւորութիւնն էլ, ամենայն հաւանականութեամբ վիպական է: Դա, ակներև ժողովրդական հէքաթների հերոս հոկան է (ռուս հրատ. եր. 113, 16—17. ոոյն թարգ. 47 11, 12):

8. Արաբական վերսիայում (ռուս հրատ. եր. 71. 31. սոյն թարգ. եր. 7. 20). չը կայ հայ ազգային խմբագրութեան այն աեղեկութիւնը (եր. 80) որ վերաբերւում է Գրիգոր լուսաւորչի հայր և Խամրովի սպանող Անակին, նրա պարթեւական ծագմանը ևլն. և շատ հաւանական է, որ այս բանը պատահական չէ: Արաբաց Գէորգ եպիսկոպոսը, որ ամենայն հաւանականութեամբ, օգտուել է յոյն ընագրով, չը գիտէ Ա. Գրիգորի պարթեական ծագումը. Նա առում է, որ Գրիգորը «ծննդեամբ Հռովմից էր» (P. Lagardii Analecta syriaca, 1858, եր. 122):

1) Հետարբիր է այժմ յիշատակել. որ de Lagarde-ը ներկայ հայ բնագիրը համարում էր յունարէնից Թարգմանուած. «Wie Trdatios, Trdates zeigen: die Armenier selbst werden ihren König nicht mit griechischer Endung genannt haben» (Ges. Abhandl., եր. 474,).

9. Իւր կարգին, արաբական թարգմանութեամբ յայտնի խմբագրութիւնը մեծ ուշադրութիւն է գարձնում Ա. Գրիգորի, սահմանակից Երկրներում, վարած կեանքի և նրա յարաբերութեան վերայ, որ նա ունէր ոչ միայն Կեսարիայի այլ նաև Սեբաստիայի եպիսկոպոսական աթոռների հետ: Ա. Գրիգորի Նեսնդիոս արքեպիսկոպոսի մօտ գնալու մանրամասնութիւնը (ոռւս հրատ. Եր. 123. սոյն թարգ. 57.), նրա ձեռնագրութեան Նկարագրութիւնը և յետ այնորիկ հովուապետական աստիճանի բարձրանալը (ոռւս հրատ. Եր. 127—129. սոյն թարգ. 62—65) յուղարկաւ որուելը Կեսարիայից (ոռւս հրատ. Եր. 129. սոյն թարգ. 65), յետ դառնալիս՝ Սեբաստիայի Պետրոս Եպիսկոպոսի մօտ հիւր մնալը, և Նեսնդիոս արքեպիսկոպոսի յանձնարարութեան համեմատ Սեբաստիայի Եպիսկոպոսի ուղեկցութեամբ վերադարձը (ոռւս հրատ. Եր. 131, սոյն թարգ. 66) ևն: Հայ ազգային խմբագրութեան մէջ կամ կրծատուած են կամ բոլորովին բաց թողուած: Ազգայնականութեամբ տոգորուած հեղինակին, որ իւսն Ագաթանգեղոս է կոչում, Կեսարիայի և Սեբաստիայի հետ կապը, բնական է, զիւրեկան չէր կարող լինել:

10. Արգէն իրական հնութիւն է այն, որ տեսնուում է արաբական վերսիայի (ըստ Երևութիւն՝ մի անտարբեր վարիանտի) մէջ, որ այդ վերսիայի ընթերցման համեմատ (ոռւս հրատ. Եր. 121, 13. սոյն թարգ. 55, 10), Տրդատը Ա. Գրիգորի ուղեկցութեամբ Դերջանից Արտաշատ, իսկ Ագաթանգեղոսի համեմատ (Եր. 460) Վաղարշապատ է գնում կնոջ, քրոջ և աւագանու հետ խորհրդակցելու՝ հովիւ ընտրելու համար: Այս տարբեր ընթերցմունքը նշանակութիւն է ստանում կապուելով այն բանի հետ, որ պարզուում է Արտաշատի և Վաղարշապատի վերաբերութեամբ, ծանօթութեան 10 յօդ. Բ. Ալբակով ոռւս. հրատ. Եր. 205, սոյն թարգ. ծանօթ. 1.):

11. Ա. Գրիգորի զրոյցի համար հին է արաբական վերսիայի և այն մանրամասնութիւնը, թէ Կոստանտինը իմանումէ Հայոց թագաւոր Տրդատի դարձը և ուրախանում (ոռւս հրատ. Եր. 141, 23. սոյն թարգ. 75, 11). դրանով առաջ է գալիս Կոստանտինի կայսրի և Հռովմայ կայսերութեան քրիստոնէութեան առաջնութիւնը: Այս դէպքում խօսքը ի հարկ է ոչ թէ իրական դրութեան (Հայաստանում քընոտոնէութիւնը մուտք է գտել Տրդատից շատ առաջ) մասին է, այլ նոյն զրոյցի տեսակէտից՝ Եղելութեան տրամաբանական արտայայտութեան մասին: Հայոց ազգային խմբագրութեամբ դուրս է գալիս, որ Կեսարիայի կայսերական եկեղեցին քարոզիչ է ուղարկում Հա-

յաստան, և հարեւան տէրութիւնը քրիստոնեայ է գարձնում այն ժամանակ՝ երբ ըուն կայսերութեան մէջ կայսրը դեռ կռապաշտ է (եր. 499):

12. Արաբակոն վերսիան աւելի իրական է Ս. Հռիփոխմէի և ընկերների նահատակութեան վերաբերութեամբ: Նրանց ազօթքները պատահաբար են յիշւում և ըոլոր եղածների մասին զեկուցանում են որոտմամբ շփոթութեան մէջ ընկած ամբոխից կենդանի մնացածները (ռուս հրատ. 81. 22, 26 սոյն թարգ. 16 27—30): Ազգային խմբագրութեան մէջ առւուժ է, թէ «այնտեղ պատահաբար կային գրողներ, որոնք գրուժ էին ըոլոր բառերը, և նրանք կարդացին թագաւորին առաջ» (եր. 109): Սակայն այստեղ էլ հայկական ընադիրը չի պաշտպանութեանից (ըստ de Lagarde-ի եր. 39) կատարուած յունական թարգմանութեամբ, որից պարզում է, թէ գրողների մասին աւելացրութիւնը բոլորովին յետին ժամանակի նորածութիւն է:

13. Վերջապէս յոյն յայտնի խմբագրութեան հեղինակը, որ երեան է գալիս արաբական վերսիայով՝ վկայ և ականատես է ոչ ամենի այլ միայն մի մասի, իսկ միւս մասի համար նրա աղբեւրներն են «արժանահաւատ մարդիկ» (ռուս հրատ. եր. 148. սոյն թարգ. 82): Իսկ հայ ազգային խմբագրութեան հեղինակը ներկայանում է որպէս Տրդատ թագաւորի ատենապկեր, որը որպէս ականատես զրել է ըոլորը իւր տիրոջ հրամանով (եր. 510): Հարկ չկայ առել, թէ ո՛վ է աւելի մօտիկ ճշմարտութեան: Սակայն Ադամթանգեղոսը հարկաւոր է համարում աւելացնել, (եր. 510—511), որ իւր ձեռքի տակ եղած նիւթից նա ընտրութիւն է արել և մուծել է իւր պատմութեան մէջ նշանաւոր և կարեւոր տեղեկութիւնները, ինչ որ աւելի հեղինակի հայեացքով, ընթերցանութեան համար հանկանալի է, !):

(1) Գրողի Ազաթանգեղոս անունի համար, որ միայն հայ ազգային խմբագրութեան մէջ կայ (արաբական վերսիան անանուն է): Այժմ կարելի է ընդունել Գութշմիդի սրամիտ բացատրութիւնը, այն է յունական «աւետարեր» ստուգարանութիւնը՝ Բայց դուցէ առաջ էլ, մինչեւ ազգային խմբագրութիւնը Ս. Գրիգորի մասին սոյն դիրքը յունասէր հայերից Ազաթանգեղիէ էր կոչում, «Եւանդելիէ»-աւետարան կոչման նման, իսկ մեր խմբագրովը միայն զրբի յունարէն վերտառութիւնը փոխել է յատուկ անուան ծերի (այդպիսի անուան յիրաւի կար) եւ այդպէս էլ իրան անուաննել է: Եւանդելիէ-ն հայերի մէջ կոչում է «աւետարան» Թարգմանուած մայրենի բառով, ինչպէս եւ վրացիների մէջ է բայց վրացերէն զեռ պատահում է յունական անուն էլ «Եւանդելիէ» ծերով, թէեւ շատ սակաւ եւ հաւանօրէն

Արաբական վերսիայի մէջ այնպիսի մանրամասնութիւններ էլ կան ի հարկէ, որ նըա ընագրի հեղինակինն են։ Այստեղ հետաքրքիր է ցոյց տալ մի տեղը, որը յայտնում է հեղինակի քաղկեդոնական լինելը։ Արաբական ընագրի խմբագրութեան քաղկեդոնական լինելու օգտին մասամբ խօսում է այն, որ նա մուտք է գտել Սինայի քաղկեդոնական օրթօգօքս վանքի մէջ, և երկում է մի ձեռագրում, որ վաւերացրել է քաղկեդոնական մի վրացի, նրա տետրակիները թուահամարելով վրացերէն տառերով, գուցէ և արտագրելով այն։ Քաղկեդոնական խմբագրութիւն լինելը նկատելի է և նրանով, որ խմբագրութիւնը է։ Գարեց հին չլինելով՝ հնաւոր է համարում հայերի, վրացիների, լազերի (արխազ) և ալանների (ազուանից) եկեղեցական միութիւնը, որը այդ ժամանակ կարելի էր երեակացել միայն քաղկեդոնականութեան հողի վերայ։ Հեղինակը, ի հարկէ, այնքան էլ միամիտ չի երկում, որ հայերի և հարեան ժողովուրդների մէջն քրիստոնէութեան առաջին քարոզութեան պատմութեան մէջ պարզօրէն ներմուծէր իւր ժամանակակից օրուայ չարեքի շահագրգռութիւնը։ Բայց Ս. Գրիգորի տեսութիւնը ընթերցողն էլ կարող է թոյլ տալ մարդարէական տարր։ Այստեղ, մեկնութեան մէջ մտցնելով հազիւ նկատելի մանրամասնութիւն մոլորեցուցիչ առաջնորդների մասին՝ հեղինակը բաւական ոուը կերպով ակնարկում է հայ տեղական եկեղեցու յարաբերութիւնը դէալի կայսերական քաղկեդոնականութիւնը, քաղկեդոնական սովորական տեսակէտով այս յարաբերութիւնը պատկերացնելով որպէս հեթանոսական հերձուած ընդհանրական եկեղեցուց, և որպէս հայ հովիւների սովորումն՝ հրապուրելու զէալ ի հեթանոսութիւն ընդհանրական եկեղեցու հարազատ որգիներին էլ։ «Յետ այսորեկ, ասէ Ս. Գրիգոր, տեսի զբաղմաթիւ հօտ (այծեաց), գոյն նոցա էր սեաւ. անցանէին նոքա ընդ ջուրսն, որ տեղային յերկնից, և նոյնժամայն փոխէին ցողիս և ի գառինս և փայլէին որպէս զլոյս և տար նոցա լինէր նման ձեան։ Ի հօտից յայսցանէ քաժանեցաւ խումբ մի, և վերստին դարձաւ յառաջին դորժն իւր եղե սեաւ, որպէս էրն

---

ներմուծուած է յունական անմիջական ազգեցութեամբ, բայց առանց առանձին իմն յաջողութեան։ Հաւանական է, որ նոյն բառը յունասէր հայերի մէջ էլ գործածական էր։ Յո կարծում եմ, որ ասածիս հետ կապունի արարական վերսիայի (45+, 5-6+ սոյն Թարդ, 64, 25—29) «Սակս սրբոյն Գրիգորի, որ ի տղայ տիոց կրթեցաւ ի զիտութեան Աստուծոյ» յուսումն բարեացաւ յառաջին դորժն իւր եղե սեաւ, որպէս է հասկանալ բարեհամբաւել բարողել աւետարանել խօսքը»

յառաջ և փոխեցաւ ի գայլս» են. (ռուս հրատ. 99, 32 37. սոյն թարգ. 34, 26—33): Եւ այնուհետեւ Ս. Գրիգորը լսում է մեկնութիւնը. «Խոկ որ ինչ վասն մաքուր հօտին յասը սպիտակ՝ այնոքիկ են, որք փայլին մկրտութեամբ և սրբով Հոգւով ի ձեռն հովուաց իւրեանց: Խոկ այնոքիկ, որք յետո դարձան ի ճշմարտութենէ, եղեն անօրէնք, փոխեցան և դարձան ի գայլս՝ այդոքին են առաջնորդք, որք հեստին և զհետ իւրեանց զառածանեն զայլս և տանեն ուր և կամին»\* (ռուս հրատ. 101. սոյն թարգ. 35).

Եթէ Ագաթանգեղոսը թոյլ է տուել իրան, իւր որոշ նպատակի համար ընտրել այնպիսի տեղեկութիւններ որ Ս. Գրիգորի ձեռքով ամբողջ Հայաստանի դարձի մասին զրոյցին, ի փառա հայ ազգային եկեղեցու, ազգային խմբագրութիւն տայ, ապաքէն մեր խմբագրութեան (արաբական) հեղինակն էլ նոյն նիւթի վերայ աշխատել է, անկասկած, իւր որոշ նպատակի շահի տեսակէտով: Նրա նպատակը պարզ է. այն է. կայսերութեան սահմաններից դուրս արևելեան բոլոր քրիստոնեայ ժողովուրդներին-հայերին, վրացիներին, լազերին (արևագ) և ալաններին (աղուանք) ի Քրիստոս միահամուռ ծննդեան դաղափարովը միացնել բիւղանդական մեծ քրիստոնեայ կայսերութեան քաղաքական հովանաւորութեան տակ: Նրանց բոլորին հոգեւորապէս միացնել ի մի եկեղեցի յանձին նրանց ընդհանուրի հովանապետ հայ Ս. Գրիգորի, որ կըթութիւն և ձեռնադրութիւն էր ստացել յոյն եկեղեցում: Ի հարկ է, այդպիսի նպատակի համար պէտք էր սկզբնական տեղական, դաւառային յոյն քարոզիչ նահատակի մասին սկզբնական զրոյցն էլ ներկայացնէր բարեյաջող նիւթ: Բայց հեղինակը իւր աշխատանքի մէջ, բաց և լազերի մասին յիշատակութիւնից, նոր մանրամասնու-

\* Մեր պատմութեան տուեալներով այդ և դրա համանման Ս. Ասհակի տեսիլքը վերաբերում է Ս. Լուսաւորչի ցեղից քահանայապետութեան վերջանալուն և նրանց անարժան յաջորդներին (Ղազար Փարպ. Թիֆլ. 1907 թ. 58—75), իսկ մեր եկեղեցու աւանդութեամբ այդ տեսիլքը վերաբերում է Վարդանանց պատերազմի նախընթաց և հետեւող դէպքերին: — «Պարթեական տեսանողին յառաջադոյն ազդեցութեամբն զհաւատոյոց որդիս Սըրոյն Գրիգորի պոակաղաղադ տեսեալ...: Որ զմերկացեալոն յանձառ լուսոյն զսեացեալոն ի գոյն ածեաց որոշ շելով ի սուրբ հօտէն ընտրեալ զքոյոն հաւաքեցեր...» (շարակ. սըրոց Ղեռնդեանց):

թիւններ քիչ է ներմուծել, և ի հարկէ, պատճառը ունէր զանց առնելու հին պատրաստի նիւթից որ և է բան, եթէ նա ձեռքի տակ ունենար տեղական զբոյցի մեսրոպեան խմբաւգրութիւնը՝ իւր նպատակին համապատասխան ընդարձակ նախագծով։ Մեսրոպի մշակածը, ըստ երեսութիւն, այս կողմից շատ աւելի մօտ էր մեր խմբագրութեան։ Հայերէն լեզուով մեզ հասել է մի յիշատակարան եռ, որի նպատակը նոյնպէս է աւելի սերտ միացնել հայերին, վրացիներին և աղուաններին ընդհանուր գրագիտութեան գաղափարով, նրանց գարձնել բոլորին մի կուլտուրական մարմին ի դէմս նրանց բոլորի հայուսուցի, որ գտել է հայերի, վրացիների և աղուանների տառերը, և որ նոյնպէս անպայման յունական կրթութիւն ունէր, յունասէր էր։ Այս յիշատակարանը Մեսրոպի կեանքի և գործունէութեան պատմութիւնն է, որ վերագրում է նրա աշակերտ Կորիւնին։ Երկու խմբագրութիւն կայ։ Նրանց այժմեան բնագիրը կրում է յետնագոյն ժամանակի ազգայնական ոգւով վերամշակութեան յայտնի հետքեր, բայց միւ և նոյն գէպքում Մեսրոպի կեանքի յունասիրական սկզբնական խմբագրութեան հիմնական գաղափարը չէ մթագնուած։ Նա թերես կրկնել է Ա. Գրիգորի գործերի յունասիրական խմբագրութեան հիմնական գաղափարը։ Խմբագրութեան, որ ինչպէս պարզուեց, պատկանում է նոյն Մեսրոպի գրչին։

Ա. Գրիգորի գործերի արաբական վերսիայի գաղափարը քաղկեդոնական հեղինակը այսպիսով ուրեմն ժառանգել է իւր նախընթաց յունասէրից։ այն ինքնուրոյն չէ։ Սակայն այնուամենայնիւ չնայելով մեր խմբագրութեան հեղինակի գէպի անդական եկեղեցին անարդար և մեժամիտ վերաբերմունքին, որ թելագրել է նրան նրա քաղկեդոնական դաւանութեան համոզմունքը, չի կարելի չխոստովանել, որ նա անձնապէս ունեցել է բարձր եկեղեցական գիտաւորութիւնը։ Այդ գիտաւորութիւնը արմատացել է հաւանօրէն, հեղինակի ջերմ հաւատով գէպի իրան հետաքրքրող ժողովուրդների ապագայ կրօնական եղբայրութիւնն ու հոգեսոր բարդաւաճումն՝ արտաքոյ ազգայնական պառակտումների։ Այսարմար է այստեղ քննել թէ երկրում այս հաւատը որպա՞ն արդարացաւ, և կարո՞ղ էր ընդհանրապէս արդարանալ։ Այժմ աւելի հետաքրքիր է նկատել, որ Մեսրոպի կենսագրութեան մէջ մտցրած միտքը, անկատած, այսպէս կամ այնպէս, իրականութիւն է արտայայտում։ Եւ պէտք է կարծել, որ մեր հեղինակի լուսաւոր հաւատը և, հետևաբար, նրա վաստակի գաղափարը, որ պահպանուած է արաբական

վերսիայի մէջ՝ է նոյնպէս հեղինակին ժամանակակից տեղական կը ականութեան արտայայտութիւն, թէև, անշուշտ սաստիկ եղէլականացրած։ Այս նշանաւոր չափով դիւրացնում է հեղինակի անձնաւորութիւնը ճշգելը, մանաւանդ եթէ համաձայնենք, որ խմբագրութիւնը քաղկեդոնականի է։ Հեղինակը չի կարող յոյն լինել, ինչպէս առաջ ինձ թւում էր։ Յիրաւի, յօդուած յոյնի հեղինակութիւն լինելուն է խօսում մի քանի անգամ կրկնութիւնը, Տրդատի հպատակական յարաբերութեան մասին դէպ ի կոստանդին կայսրը։ Հռովմէական կայսը հրաւիրում է հայոց Տրդատ թագաւորին, և միջի այլոց, հարկ վճարելու համար (Եր. 141, 28, սոյն թարգմ. Եր. 75, 20)։ Հայոց թագաւորը «գնայր առ թագաւոր մեծ քան զինքն խաղաղութեամբ առ ի կալ ընդ նորա իշխանութեամբ (Եր. և 143, 27. սոյն թարգ. 77, 20) հռովմէական կայսրը «պարտաւորեաց զնոսա (հայոց իշխաններին) հարկս հարկանել» (Եր. և 147, 11. սոյն թարգ. 80, 21)։ Զընայելով հեղինակի այս յայտնի քաղաքական համակրութեանը դէպ ի քրիստոնեայ կայսերութիւնը, նկարագրուած ժողովուրդների վերաբերութամբ նրա սիրառատ և վերին աստիճանի մտերմական շահագրգութիւնը, իմ կարծիքով, նրա ոչ յունական ծագումը անկասկած է գարճնում։ Գերազանց ուշագրութիւնը, որ նադարձնում է հայերի վերայ, Տրդատի առագութիւնը առասպելական գոյներով նկարագրելն և վրացիների, լազերի (արխաղների) ու աղուանների (ալանների) թագաւորների նուաստացնելն ու երկրորդական դարձնելը նոյնպէս պարզ ցոյց են տալիս, որ հեղինակը հայ էր։ ըայց հայ քաղկեդոնական, որ իւրշարագրութիւնը ի հարկէ հայերէն է գրել։

Սակայն հայ քաղկեդոնականը, որ այնպիսի կենդանի հետաքրքրութիւն է ցոյց տալիս միաժամանակ և դէպի լազ, վրացի և աղուան եկեղեցիները, ծագմամբ, ամենից առաջ, կարող էր լինել Տայոց գաւառից (վրացերէն Տաօ, հայերէն Տայք)։ Այս բանի ապացոյցն է և նրա շահագրգութիւնը դէպի իւր ծնընդավայր Արտանուշի բդեշխութիւնը, որ դրուած է Հայոց Տըրդատ թագաւորի ստորագրեալ իշխանութիւնների թւում (Եր. 115, 6-7. սոյն թարգ. 49, 6)։ Այս բանի ապացոյցն են աշխարհագրական անունների տեղական, վրացական ձեերը։ Եթէ հեղինակը տայեցի է, ուրեմն նա գըել է՝ մինչև Ը. դարի կէոը, երբ դեռ գոյութիւն ունէր հայոց բդեշխութիւնը Արտանուշ գետի հովտում, ուր ի միջի այլոց բդեշխուերը հիմնեցին և կաղմախ ամրոցը (Վահութե, Descript. géogr., 118)։ Ը. դարի

կէսից սկսած Տայք-Կղարջքից սկսում է վրաց եկեղեցական կազմութիւնը, հայ քաղկեդոնական համայնքը վրացի է դառնում, և այդ օրից սկսած էլ հող չը կար, որ վրացիները, լազերը և արխաղները հայերի հետ միանալու գաղափարով առաջնորդուեն, այն էլ հայ հովուապետի գերիշխանութեան տակ: Հայերի վերջին քաղկեդոնական կաթուղիկոսը, ըստ երեսութիւնի, դարի առաջին քառորդից յետոյ չէ:

Այսպէս, ըստ իս, հայերի մէջ Ս. Գրիգորի պաշտամունքի զարգանալով գրականութեան մէջ ստացուեցին հետևեալ հիմնական բաժանումները, մի կողմ թողնելով սկզբնական բերանացի կամ գրաւոր զրոյցները գաւառային, արևմտահայ նաև հատակ քարողչի մասին.

1. Ս. Գրիգորի մասին գերքը, որ տարբեր անուններ է կրում, թերես և Ագաթանգեղիէ, յիրաւի, Մեսրոպի գործն է կամ վերագրւում է Տարօնեցի Մեսրոպին,—է Տ. դարի ուղղափառ յունասիրական խմբագրութիւն: Այդ մեզ չէ հասել: Հաւանօրէն թարգմանուել է այն յունարէն: Թերես 714 թուին այդ թարգմանութիւնից օգտուել է արաբաց Գէորգ եպիսկոպոսը:

2. Քաղկեդոնական խմբագրութիւնը է-ը-լ. դարերի գործէ, կազմուել է այն Տայոց գաւառում և թերատ պահպանուել է, յունարէնից թարգմանուած, այժմ հրատարակող արաբերէնում: Այն թարգմանուել է, հաւանօրէն, վրացերէն էլ:

3. Ագաթանգեղոսի պատմութիւնը Ը. դարի ազգային խմբագրութիւն է: Նրանից շուտով էլ կատարուել է յունարէն թարգմանութիւնը, որը վերջին անգամ հրատարակեց Տագարդ»-ը: Այն է միայն պահպանուել հայ լեզուով, բայց մի քանի յետնագոյն ուղղումներով ու յաւելումներով:

Մեզ մնում է ընագըի վերաբերութեամբ մի քանի գիտողութիւններ անել: Նրանք գասաւորուած են հետևեալ յօդուածներում: (մենք հայ թարգմանութեան մէջ դնում ենք միայն 1 յօդուածը):

Սինայի Ս. Եկատերինի մատենագարանի № 460 ձեռագիրը, որ բովանդակում է ի թիւս այլ վկայաբանական նիւթերի Ս. Գրիգորի նահատակութեան արաբերէն բնագիրը, գրուած է

մագաղաթի վերայ, սկիզբը և վերջը, տեղտեղ, և մէջը պակասէ։ Երեսները թուահամարաւած են կոպտերէն (դպտի), տետրակաների հիմնական թուարկութիւնը վրացերէն է և կեղեցական հասարակ տառերով։ Այս թուարկութեամբ դատելով՝ սկզբից պակաս է տասներկու տետրակ համարեա ամբողջովին, կայ միայն 10-րդ տետրի ութերորդ թերթը, ճակատի առաջին թերթը։ Զեռագիրը այժմեան ձեռով վերջանում է 34-րդ տետրակի առաջին թերթով։